ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Հայաստանի քիմիական հանդես **65, №3, 2012** Химический журнал Армении

ԴԱՎԹՅԱՆ ՍԵՎԱՆ ՊԱՐՈՒՅՐԻ

(70-ամյա հոբելյանի առթիվ)

Ճանաչված գիտնական, ՀՊՃՀ-ի Տեսական քիմիայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, քիմիական գիտությունների դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Սևան Դավթյանը 70 տարեկան է:

1961թ., ավարտելով Թբիլիսիի 93-րդ միջնակարգ դպրոցը, նա ընդունվում է Երևանի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետ: Ավարտելուց հետո, արդեն որպես մաթեմատիկոս, իր հետագա կյանքը առհավետ կապում է քիմիայի հետ, դառնալով ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի Չեռնոգոլովկայի մասնաճյուղի ասպիրանտ: Նա իր գիտական գործունեությունը սկսում է հռչակավոր գիտնական, ակադեմիկոս Ն. Ենիկոլոպյանի ղեկավարությամբ և զուգահեռաբար քիմիայի բնագավառում իր գիտելիքները ամրապնդելու համար հաճախում է Մոսկվայի համալսարանի քիմիական ֆակուլտետ որպես ազատ ունկնդիր:

Մաթեմատիկոսի բազային մասնագիտությունը հետագայում օգնեց Ս. Դավթյանին այդ բնագավառին բնորոշ կուռ տրամաբանությունը և տեսական ընդհանրացումների ունակությունը հաջողությամբ օգտագործել քիմիական բարդ երևույթների մեխանիզմների պարզաբանման համար:

Ս. Դավթյանը իր գիտական գործունեությունը սկսել է հետերոատոմ պարունակող պոլիմերների հետազոտությամբ: Այս աշխատանքները հիմք հանդիսացան նրա թեկնածուական թեզի համար, որը նա պաշտպանեց 1968թ.-ին: Հետագայում նա արդեն ոչ իզոթերմ ջերմային ռեժիմներում պոլիմերացման առանձնահատկությունների վերաբերյալ պաշտպանում է իր դոկտորական թեզը (1976թ.):

Ս. Դավթյանի ներդրումը գիտության մեջ կարելի է հակիրճ ներկայացնել հետևյալ կերպ:

70-ական թվականների ավարտին Ս.Դավթյանի ղեկավարությամբ բացահայտվեցին ստրատեգիական նշանակություն ունեցող էպոքսիդային միացությունների հիման վրա բարձր ֆիզիկամեխանիկական հատկություններով օժտված ամրանված կամ լցոնված նյութերի ստացման մեխանիզմները: Պետք է նշել, որ չնայած այս աշխատանքների հրապարակումից անցել է ավելի քան երեսուն տարի, դրանք դեռ չեն կորցրել իրենց արդիականությունը: Մինչ այսօր այդ աշխատանքների վրա կարելի է գտնել բազմաթիվ հղումներ:

Հետագայում Ս. Դավթյանի կողմից ստեղծվել է □ոչ իզոթերմային պայմաններում□ պոլիմերացման գիտական նոր ուղղությունը, որում համընդհանուր ճանաչում է ստացել պոլիմերացման պրոցեսներում ջերմային ալիքի տարածման երևույթը, որը գրականության մեջ հայտնի է որպես □ճակատային պոլիմերացում□: 1991թ.-ից, հայ գիտնականից և նրա աշակերտներից հետո, գիտական այս ուղղությամբ սկսեցին զբաղվել նաև ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում և այլ երկրներում: Այս ասպարեզում կիրառական մեծ հետաքրքրություն են ստանում պոլիմերային կոմպոզիցիոն նյութերի, այդ թվում նանոկոմպոզիտների սինթեզը:

Ս. Դավթյանի ստացած արդյունքների նկատմամբ հետաքրքրության մասին է խոսում նաև նրա տպագիր աշխատանքների վրա մեծաքանակ հղումների առկայությունը:

Ս. Դավթյանի աշխատանքների կարևորությունը հիմք հանդիսացավ նրա անունը մի շարք միջազգային հանրագիտարաններում ընդգրկելու և նրան միջազգային շատ գիտական ընկերությունների անդամ ընտրելու համար: Անկասկած, Ս.Դավթյանի գիտական հեղինակության ապացույցն է նրան ամերիկյան “Journal of Nanomaterials” գիտական ամսագրի հրավիրված գլխավոր խմբագիր նշանակելու փաստը:

Ս. Դավթյանի արդյունավետ աշխատանքի արդյունք է նաև նրա հեղինակությամբ 360 գիտական հոդվածների, մենագրությունների, ուսումնական ձեռնարկի և 19 արտոնագրերի առկայությունը: Նրա խորհրդատվությամբ և ղեկավարությամբ պաշտպանվել են 5 դոկտորական և 26 թեկնածուական թեզեր:

Որտեղ էլ աշխատել է Ս.Դավթյանը՝ կատարելով լաբորատորիաների, ամբիոնների վարիչների և, վերջապես, ՀՀ ԳԱԱ Անօրգանական և ընդհանուր քիմիայի ինստիտուտի տնօրենի պարտականությունները, նա իր սկզբունքայնությամբ, պահանջկոտությամբ և ակտիվ գիտական աշխատանքով վայելել է աշխատողների համակրանքը և ակնածանքը:

Ամբողջական չէր լինի Ս. Դավթյանի նկարագիրը, եթե չհիշեինք նրա գործունեությունը երկրի համար ճակատագրական՝ Ղարաբաղյան պատերազմի տարիներին: Ծանր 1991 թվականին Ս.Դավթյանը իր տիկնոջ՝ պրոֆեսոր Ա.Տոնոյանի հետ, թողնելով աշխատանքի և կենցաղի բարեկեցիկ պայմանները Ռուսաստանում, տեղափոխվեց ցուրտ և մութ Երևան՝ իրենց մասնակցությունը բերելու համազգային շարժմանը: Ս. Դավթյանը և Ա. Տոնոյանը ակտիվ աշխատանք կատարեցին Ռուսաստանի գիտնականների և մտավորականների շրջանում՝ նրանց հասցնելով տեղի ունեցող պրոցեսների իրական պատկերը՝ ռուս և այլ երկրների առաջադեմ մտավորականների ներկայացուցիչներին, ինչպես նաև Ռուսաստանում հանգանակած միջոցները բերելով Արցախ:

ՀՀ ԳԱԱ <<Քիմիական և *Երկրի մասին գիտությունների>> բաժանմունքը, <<Հայաստանի քիմիական հանդեսի>> խմբագրական կոլեգիան* և *հանրապետության ողջ քիմիական հասարակությունը սրտանց* և *ջերմորեն շնորհավորում են Սևան Պարույրի Դավթյանին հոբելյանի առթիվ՝ ցանկանալով նրան ակտիվ ստեղծագործական աշխատանք* և *բարօրություն:*